Հավելված N1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՑԹԻ-ԲՄԾՁԲ-25/01

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար Կանաչ տարածքների պահպանման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՑԹԻ-ԲՄԾՁԲ-25/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 21.02.2025թ.-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 22.02.2025թ.-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 Բարև Ձեզ, հայտի ապահովման գումար անհրաժեշտ է թե չէ:
Ըստ Ձեր կողմից տեղադրված Բաց մրցույթի բովանդակության՝
Սույն ընթացակարգը կազմակերպվում է ՀՀ գնումների մասին 15-րդ հոդվածի 6-րդ մասին հիմքով ։
Նաև նշվում է, որ բաց հրատապ մրցույթ է, այս դեպքում հայտի ապահովման գումար անհրաժեշտ չէ, փաստորեն: Կասեք հայտի ապահովման գումարը պետք է թե չէ:

Պարզաբանում N 1 Հարգելի մասնակից , նշենք, որ այո պարտադիր է հայտի ապահովումը անկախ նրանից, որ այն կազմակերպված է ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6դ մասի հիմքով ։ Հայտի ապահովման մասին հարցերը կարգավորվում են՝ ՀՀ գնումների մասին օրենքի 32-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի դ) ենթակետը, 9-րդ մասը, ինչպես նաև հրավերի 7-րդ բաժինը ամբողջությամբ հայտի ապահովման ներկայացմանն է վերաբերվում ։

Նշենք նաև, որ համաձայն 526-Ն որոշման32-րդ մասի 20-րդ կետի՝ հայտի ապահովում չի ներկայացվում, եթե ընթացակարգը կազմված է 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի, այն է.

- 1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

Իսկ վերոնշյալ ընթացակարգը կազմակերպված է ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդված 6-րդ մասի հիմքով ։

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՑԹԻ-ԲՄԾՁԲ-25/01 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա.Խաչատրյան -ին:
ընթացակարգի ծածկագիրը անունը ազգանունը

Հեռախոս՝ 094427127 :

Էլեկտրանային փոստ՝ khachatryan.aida@bk.ru:

ՀՑԹԻ-ԲՄԾՁԲ-25/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը
ընթացակարգի ծածկագիրը